

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՊՍՏՈՄԱՐԱԿԱՆ ԶՈՐԱԳՆԴԵՐԻ ՄՍՍԻՆ

Հայաստանում ընդհանուր ապստամբութիւն անելու համար ամենաառաջին պայմաններից մէկն է՝ մարտական ապստամբական ոյժերի գոյութիւնը հայերիս մէջ։ Իրողութիւնները մեզ ապացուցանում են, որ այդ կէտը պարզ է իւրաքանչիւր հային։ Բայց իրողութիւնները նմանապէս մեզ ապացուցանում են, որ շատ շատերի համար միանգամայն մոթ է այն, թէ ինչ եղանակով պէտք է գործադրել այդ ոյժերը, որպէս զի այդ գործադրութիւնը նպատակայարմար լինի, այսինքն ուղղակի ծառայել գործի աջողութեան։ Եթէ մարտական զնդերը միմեանցից անջատ են, միմեանց հետ չունեն մէկ ընդհանուր կապ և իւրաքանչիւրը կղզիացած է մի յայտնի անկիւնում — նրանք դատապարտված են անգորութեան։ Եթէ այդպիսի դրութեան մէջ լինելով, մարտական զնդերից երբեմն մէկը, երբեմն միւսը կոխներ է մղում այս կամ այն քիւրդ խմբի դէմ — նա ոչինչ օգուտ չէ բերում գործին։ Միմեանցից անջատ մարտական զնդերը եթէ մէկ ընդհանուր կապ մակերպութեան մէջ ծուլված չեն, եթէ մէկ ընդհանուր, կանխապէս որոշված նախագծով չեն գործում, եթէ ընդհանուր նախագծի գորութեամբ նրանք, ամեն մէկն իր եզած վայրում միաժամանակ չեն կատարում յարձակումն թշնամու վրայ, լինի այդ յարձակումն այս կամ այն գնառի կողմից նոյն իսկ յաղթական — նրանք զուր կերպով վատնում են իրենց ոյժերը, վտանգ կրելով նոյն իրենք յուսահատվել և ուրիշներին յուսահատեցնել գործի աջողութեան վերաբերութեամբ։ Օրինակ, երբեմնապէս հասնում են տեղեկութիւններ թէ՛ Հայաստանի այն ինչ տեղը հայկական մի զօրագունդ քիւրդերի մի գնառի հետ կռիւց, յաղթեց կամ յաղթվեց, մի երկրորդ տեղ՝ նորից նոյնը, մի երրորդ տեղ՝ կրկին ու կրկին նոյնը։ Այդ լուրերն ինքն ըստ ինքեան ուրախալի են, իբրև ապացոյց յեղափոխական ոգու տարածման հայերիս մէջ։ Բայց

ի՞նչ նպատակով են կուում Միթէ քիւրդերին սպանելու համար միայն։ Փաստից լոկ այդ հետևութիւնն է կարելի անել, որովհետև այդպիսի դէպքերում չէ էլ կարող որ և է նպատակ լինել, քացի, արդարև, միմիայն քիւրդին սպանելը։ — Փակագծի մէջ պէտք է ասել թէ ճիշտ է, պատահական կոխների առիթներ կարող են միշտ լինել այն զօրագնդերի հետ, որոնք պտտում են Հայաստանի զանազան վայրերում որոշ տեղ հասնելու դիտարկութեամբ։ Բայց այդ դէպքում պէտք է այլ կերպ անցնել երկրի ներսը և կարելիին շափ պատահական առիթների զոհ չդառնալ։ Արդեօք այս կամ այն զօրագնդի մասնաւոր կոխները գործին շահաւէտ են։ արդեօք մարտական ոյժերի անջատ մասնաւոր ու ինքնուրոյն եղանակով գործադրութիւնը նպատակայարմար է։ Այդ գործին շահը պահանջում է այնպիսի կերպով կարգադրել այդ ոյժերի գործադրութիւնը, որ փոխարէն բարձր կոչմանը ծառայելու, այս կամ այն զօրագունդը պէտք չունենայ մասնաւոր կերպով գիմելու։ այս կամ այն քիւրդ խմբին կոտորելու, կոտորվելու վտանգն էլ աչքի առջև ունենալով ի՞նչպէս պէտք է նրանց կարգադրել։ Ամենքին արդէն պարզ է, որ այդ ոյժերն ապաստամբական համար են նշանակված։ Ապստամբութիւնը պիտի կրէ ընդհանուր կերպարանք, այսինքն երկրի աշխարհազօրական այլ և այլ կէտերում հայկական զօրագնդերը միաժամանակ պէտք է բարձրանան թշնամու դէմ, միաժամանակ զանազան կողմերից հարուածելով նրան ու կազմալուծելով նրա ոյժերը և իրենց ձեռքը գցելով թշնամու նիւթական ոյժերը և հասարակական հիմնարկութիւնները։ Միայն այդ եղանակով տեղի ունեցած ապստամբութիւնը կարող է յաղթանակը առնել և, ուրեմն, նպատակայարմար կերպով ծառայել գործին։ Բայց քանի որ զանազան կողմերում, միաժամանակ և ընդհանուր կերպով պէտք է ապստամբեն հայկական զօրագնդերը, ապստամբական հոսանքում գցելով նաև հայ ժողովրդի ընդհանրութեան, հետևապէս, պէտք է այդ զօրագնդերն ունենան կանխապէս միմեանց մէջ հաստատված ընդհանուր սերտ կապ մի կենտրոնական մարմնի միջոցով։ այսինքն

իրենցից պէտք է կազմեն մէկ ընդհանուր
կազմակերպութեան ճիւղեր և հարկ եղած
ժամանակը կը դործեն մէկ ընդհանուր, կան-
խապէս որոշված նախագծով Այս հիմունքներն
այժմ պէտք է աչքի առջև ունենան կազմվող զօրագնդիրը:
Հայաստանում մասնաւոր կոիւնքերով շատ շխտենք մեր
ոյժերը, այլ տոկունութեամբ պատրաստվենք կարմիր
օրվայ համար, որ հանգամանքները կարող են շատ շուտ
առաջացնել:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ն Ն Ե Ր .

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱԻՅ .

(Սեփական թղթակցից)

Կ . Պօլիս, 13 նոյեմբեր, 1890 .

Այս նամակս սկսել կուզեմ քանի մը կարճ խորհրդա-
ծութիւններով Տասնից դատաւարութեան մասին: Այսօր,
երբ արդէն ամենքն կարգացած են լրագիրներու մէջ այդ
դատաւարութեան պատճէնը, կուգամ հրապարակաւ
յայտնելու, որ նախ քան տալագրութեան յանձնել թիւրք
կառավարութիւնն անկիա լաւ մը խմբագրած է, դատա-
ւարտութեան յայտարարութիւնն աղաւաղելով, չա-
սած բաներ ներս մտցունելով և չեղած «խոտտովանու-
թիւնք» նշանակելով: Ամենահաստատ ազգիւրներէ
մենք ստուգած ենք այդ, որ և կերպարանքով: Սակայն
այդուամենայնիւ այդ դատաւարութեան ընթերցումէն
ետք կարելի է միայն մէկ որով եղբակացութեան հասնել .
այսինքն այն, որ թիւրքը կուզէ Եւրոպային ցոյց առա-
թէ հայք իրենց անկախութեան համար «խոտովարար»
ընկերութիւններ ունին, որք յեղափոխական ընթացք
բռնած են և հետևապէս թիւրք կառավարութիւնն
իրաւունք ունի Եւրոպայի առջև հայածել հայերը, ինչպէս
ալ կընէ այժմ: Այդ տեսակետով միայն կրնայ բացա-
ւորուիլ թիւրքի վերջին անհամար ձերբակալութեանց
գիմելու համարձակութիւնը: Սակայն այդ դատաւարու-
թեան ընդարձակ հրատարակութիւնը երկայնի սրի
պաշտօն կը կատարէ թիւրքին համար: Ո՛ր հայ այսօր
չըզդիտեր շնորհիւ այդ դատաւարութեան հրատարակման,
որ թիւրքի տեսակէտով բոլորովին այլ նպատակի պիտի
ժառանգած ըլլար, — որ հայ այսօր չզդիտէ թէ հայոց մէջ
կան բազմաթիւ յեղափոխականք ծուրուած ընդարձակ
կազմակերպութեան մը մէջ որ է Հնչակեան, և նախա-
ձեռնած Ս . Գործին սուրբ պատերազմը: Ո՛ր հայ այսօր
չըզդիտեր որ ինքը մեծ գաստ մը ունեցեր է եղեր, որոյ
համար թնամու արիւնք թափուելով կը խառնուի հայու
արեան հետ, որոյ համար ցմահ բերդարգելութեան և
նոյն իսկ մահուան կը դատաւարտուին անձնուրաց
զինուորք . յեղափոխականք: Ո՛ր հայ այսօր չըզդիտէ թէ
իր անկախութեան հարցն է մէջտեղ եկած, որոյ ոգով

տողորված այնքան սառնարիւն և այնքան հանդարտ
կերպով հայ բանտիւնները լսեցին իրենց մահուան դատա-
վճիռը: Ո՛ր հայ այսօր չզդիտէ թէ յանուն ինչի Հնչակեան
յեղափոխականք կուզեն ձեռք բերել ազգային անկախու-
թիւն, լսելով Փիլիսոպոս անուն պարզ բանողի մը բերնէ
դատաւարութեան միջոցին այն գեղեցիկ գաղափարներ
թէ՛ պէտք է ամենք հաստատ ըլլան, թէ կառավարու-
թեան ղեկը ժողովրդեան ձեռքը պիտի ըլլայ: Ստոյգ է
որ այդ գաղափարներ յայտնելու ձևն ու ոճը ունին
պարզ բաների մը անպաճոյճ պարզութիւնը և այդ գա-
ղափարներ ճշտապէս յայտնելու համար հարկ էր այլ
ոճ և այլ լեզու, սակայն խնդրոյ էութիւնն այդ չէ: Այլ
նշանաւոր է այն պարագան որ Փիլիսոպոսներն այդ
տեսակ վսեմ ու խորհրդաւոր գաղափարներ կը մտնեն
ամենայն դիւրութեամբ և ո՛չ միայն կը մտնեն, այլ նաև
կը յափշտակուին յեղափոխական գործունէութեան գիմելու
շափ, գիտնալով հանդերձ այն պատիժը որ կը ստանան
թնամու ձեռքն ընկած ժամանակ: Փիլիսոպոսի, այդ պարզ
բանողի, այդ պարզ լեզուով արած յայտարարութիւնը կապա-
ցուցանէ թէ որչափի հակամէտ է հայ ժողովուրդը գրաւվել
Հնչակեան գաղափարներով, վասն զի այդ գաղափարներ
կը խօսին նրա սրտին, հաց ուտելու ու չուտելու մեծ
խնդիրն շօշափող ըլլալով: Այդ տեսակետով Տասնից
դատաւարութեամբ Հնչակեան գաղափարները մեծ յաղ-
թանակ տարած են:

Ահա՛ այդ ամենն ամեն մէկ հայ այսօր դիտէ Տասնից
դատաւարութեան հրատարակութիւնէն: Հայը տեսաւ որ
հայ յեղափոխականք շարունակ կը գործեն: Յեղափոխական
ոգոյ և գաղափարաց տարածման համար մէկ գեղեցիկ
միջոց եղաւ այդ, որով և մեր յեղափոխականաց գէ՛մ այդ
միջոցով ուղղած սուրն թիւրքին իրեն դարձաւ:

Անյնեք իրողութեանց:

Ազգային ժողովն հրաւիրեալ էր ի նիստ գումարել
խորհրդակցելու համար վերսկսած կրկին ժողովոյ հրա-
ժարականներին վերայ: Այլ սակայն բարձրագոյն հրա-
մանաւ նիստը արգիլուեցաւ տեղի ունենալէ, որոյ պատ-
ճառներն առ այժմ չեն գիտցուիր: Բ . Գումանէն երեք
պաշտօնագրեր կը հասնին ի պատրիարքարան փակում
ազգարարութեամբ և Բերայի ոստիկանապետն ալ դիմելով
ժողովին առենապետ Քրիս . Ղազարապետին, սպառնացեր
է յանուն ստիթանին որ եթէ երբէք գումարուին, ամբողջ
երեսփոխանք պիտի ձերբակալուին: Այսչափով կը հե-
ռանայ: Տեղւոյս Լ և Ը թ շ է ր Ը Լ տ լրագիրը կը գրէ
թէ հայոց ազգ . ժողովը պիտի դումարի գալ շարթու,
մինչդեռ հայ լրագիրք և ո՛չ մի անկախութիւն արած
էին: Այլթանը սահմանադրութիւնը ոչնչացնելու կը
պատրաստուի. վատ դիտաւորութիւն չէ, վասնզի այդ
միջոցով կառավարութիւնը սահմանադրական գաղափար-
ներին կուտայ իրենց պատշաճ հեղինակութիւնը, որ
շնորհիւ գեղեցկարարաւ և առողջ Թաքեր ունեցող
երեսփոխաններու շատոնց ինկած է . . .

Այս միջոցիս մայրաքաղաքիս մէջ ձերբակալութիւնք
շատ առատ են. հազարէն տեղի վը համարուի վնահրամայել

Տատեան, որ մի երկու շաբաթ առաջ բանտարկուեցաւ այն պատրուակաւ որ ինքը իբրեւ թէ մի ատրճանակ տուած չինի առ Արմենակ, խաշիկ փաստաբանն սպանող թէոթիստը, Վերջերս ազատ արձակուեցաւ. սակայն այս օրեր կրկին ձերբակալուցին և այժմ բանտին մէջն է։ Պաղտատար անուն վանեցի մը ձերբակալուեցաւ հետեւեալ պարագաներու մէջ՝ առ վերջերս կերթայ կենտր. բանտը, ուր պարտքի համար բանտարկեալ իր մի հայրենակիցը կուգէ տեսնելու բանտը գալով նա կը խուզարկուի և գրպանէն կ'անան գրութիւն մը, որ Պաղտատար իսկոյն բերանը կը նետէ, առարկելով թէ սիրուհւոյն նամակն է։ Բայց բերնէն հանելով և թուղթը երևակայաբար կարգացուելով կամբաստանեն զնա իրրեւ յեղափոխական։ Այժմ դատաւարութիւնը տեղի կ'ունենայ. դատախազը կը պահանջէ որ ամբաստանեալը պատժուի ըստ տրամագրութեան 54-դ յօդուածին, այսինքն իրրեւ անդամ Հայաստան անկախ դարձունել ձգտող ընկերութեան։ Անցեալները ձերբակալուեցաւ «Մասիս» խմբագիր Արփիար Արփիարեան. արձակուեցաւ և կրկին ձերբակալուեցաւ։ Հայ բարձրատիճան անձեր և հոգևորականներ պաշտաւ կը կանչուին և կը հարցաքննուին։ Ոստիկանութիւնը խանի մը մէջ գտած է 50 հատ պայթուցիկ ռումբեր, որք հայ մը շինած է, և անոր սեփական գիւտը կը կազմեն վառօթէն և գնատակներէն շինուած այդ ռումբերն։ Թիւրք ոստիկանութիւնը արկղը որու մեջ կը գտնուէին այդ ռումբերն վախցած է բանալ մէջը տինամիթ կարծելով։ Ռումբերն գտած լինելով սուլթանն կենթադրէ եղբոր թէ հայերը կուզեն Պօլսը օդը բարձրացունել... Մեր սուլթանը կըսեն թէ շատ խորագէտ անձի մէկն է... Ռմադորձը խիստ կը փնտռուի...

Պերճ.

ՆԱՄՍԱԿՆԵՐ ԹԻՒՐԳՈՅ ՀՍՅՍՏՍՆԻՅ

Մարգուան, 16 հոկտեմբեր 1890.

Մի քանի օր առաջ քաղաքիս Պ ու լ ա տ ա յ Բ ա զ ա Ր կոչուած չուկան Բէժիի պաշտօնականներէն մին կը ձերբակալէ խեղճ հայ երիտասարդ մը, ամբաստանելով թէ փախուկ (ղաշախ) ծխախոտ կը ծխէ։ Եւ պաշտօնեան կըսէ թէ իրաւունք չունի ձեռնել և հայհոյելը Այս խօսքին վրայ պաշտօնեան ապտակ մի կը զարնէ այդ ասող հայուն։ Բազմութիւնն արդէն շատացած ըլլալով հայերը կը յարձակին պաշտօնեային վրան և սաստիկ կը ձեռնեն, խեղճ հայն ձեռքէն ազատելով։ Այդ դէպքին վրայ շատ մի իսլամք կը յուղուին և կը պատրաստուին եղբոր հայոց թաղերուն վրայ յարձակելու իրենց զուլա ունենալով։ Ստամպուլ օդու Մէհմէդը, հայատեանց մէկը, որ համբաւաւոր հանդիսացած էր իր չարաննէք և աւազակային գործերով։ Եւ ահա այս առաւօտ կը լսենք թէ՝ երէկ զինքն ժամը 5-ին ըստ թիւրքաց Բ օ ս Մ ա չ է է կոչուած

հայոց թաղը 30-ի չափ զինեալ թիւրքեր կը պատրաստուին եղբոր հայոց տունները կոխել նոցա կոտորելու նպատակաւ։ Բայց երկու մարտախոյս (ղաշախ) հայեր անակնկալ կերպով մը կը փրկեն անմեղ հայերն։ Մաքսախոյսք, որք այդ ատեն ծխախոտ կը փախցնեն եղբոր Բօս Մահմէտի կողմը կը տեսնեն բազմութիւն մը. կարծելով թէ ընթերցող պաշտօնեայք են, կուզեն փախչիլ։ Սակայն թիւրք արդէն նոցա նկատած ըլլալով կը ստանան անոնց թէ կենան եթէ չեն ուղեր սպանուիլ։ Մարտախոյսք կը ստիպուին կենալ։ Թիւրք բազմութիւնը կը չըմբատի երկու հային, հարցնելով թէ ովքեր են և ուր կերթան։ Հայք կը պատասխանեն ճամարտութիւնը։ Բայց թիւրք զնոյն պարագաւորը ճանաչելով հայերէն մէկին, թուրը կը քաշէ և կուգէ զարնել անոր գլուխը կատաղած ըսելով՝ «Հայերի գլխաւորն սա է»։ Սակայն ճարպիկ հայն կը կարենայ ժամանակէն դէմ գնել իր թուրն թիւրքի թրին և ազատիլ նորա հարուածէն։ Այդ միջոցին իր ընկերը կը հանէ ատրճանակն և ուղղելով թիւրքաց դէմ, կը սպառնայ թէ եթէ մէկը մօտենայ իրենց՝ տեղն ի վայր կը գլորի։ Մեր ք ա լ թիւրքերը ետ կը քաշուին և փողոցին վարի ծայրը երթալով խորհուրդ կընեն և այնուհետեւ կը քաշուին իրենց գիւղը որ մէկ ժամու չափ է՝ քաղաքիս դէպի արեւելեան կողմը։ Մ ա ռ ն ճ ա անունով թիւրք խմբին պարագաւորն էր, որ այս կողմերն համբաւաւոր է իր աւազակութեամբ և մարդառաւանքութեամբ։ Այդ գիւղացի թիւրքերն արդէն քանի մը անգամ՝ այդպիսի կոտորման փորձ ըրած են, բայց միշտ անյաջող։ Անշուշտ մէկ օր պիտի յաջողին. կառավարութիւն չը կայ և եթէ պատահական արգելքներ չըլլան՝ հայոց վրայ նոցա յարձակուիլը նոյնչափ դիւրին է, որչափ տունի մը բաց դռներն գողի մը համար։

Հայ.

(Սեփական թղթակցից)

Սերաստիա, 20 հոկտեմբեր 1890.

Տեղւոյս հայ երիտասարդութիւնն ի նկատի առնելով քաղաքիս առաջնորդ Պետրոս եպիսկոպոսի թոյլ և ազգակործան ընթացքն և նորա հակումը դէպի թիւրք կառավարութեան շողոքորթութիւններին, իր արդար զայրոյթի մի ցոյցն ու փորձը տուաւ գրեթէ երկու ամիս առաջ Ս. Նշանի վանուց խուլ որմերու մէջ գանալով զնորին արբաղութիւն։ Ստոյգ էր թէ սոյն միջադէպ մասամբ անձանթ մնաց քաղաքիս հասարակութեան մեծ մասից, սակայն արդէն արձագանք գտած էր թ. ա յ մ զ ի և այլ Եւրօպական թերթերու մէջ։ Տեղւոյս կուսակալ Մէնտուհ պէյ նկատելով որ, սոյն ան. նպատակ հրատարակութիւնն եւրօպական և հայկական մտքերն պղտորելով՝ իւր միջինայութիւններն ի գերեւ պիտի ելլին, մի քանի օր առաջ մասնաւոր թ ա գ Ր ի Ր մը ուղղելով Պետրոս եպիսկոպոսին, խստիւ կը պահանջէր որ թ ա յ մ զ ի այդ շուրհ, ինչպէս նաև քաղաքիս և չըմբալայ վիճակաց մէջ գործուած կեղեքմանց, հալածանաց

և ոճրագործութեանց մասին ցարդ արտասահման լրագրող մէջ եղած հրատարակութիւններն մի առ մի հրապարակու հերքեն։ Ուստի, կուսակալի այդ հրամանի համաձայն, Պետրոս եպիսկոպոս՝ ազգին ներկայացուցիչ մի քանի մեծ աւելան (sic) աղաներու հետ հեռագրուել Պօլիս թիւրք և հայ մամուլներու հանեցին և հերքեցին թէ այժմ ինչպէս նաև Եւրօպական թերթերու մէջ արձագանք գտած այդ դէպքեր, իրրեւ չեն զեւալ և ստացող՝ ոմանց չարամտաց կողմէ։

Սակայն յօդուածագիրս, յանուն Սերաստիոյ ողջամտութեամբ արդեալութեան և ճշեալ ժողովրդեան կուգամ թարգման հանդիսանալ աղատախոհ մտքերու առջև, որ ոչ միայն սոյնօրինակ դէպքեր տեղի ունեցած են, այլ կը յաւելումք և վստահ եմք որ յետ այսու այդ կարգի արարքներ սովորական բաներ պիտի ըլլան, մեր անկերպարան վիճակն, յաշտ օտարաց, ոսկեգայն նկարողներու գէտ և երբ օր քանգօր կը սաստկանան կառավարութեան և թիւրք ժողովրդեան հալածանքներն, հարստահարութիւններն ու անյուր խղճութիւնք։ Յարգ մեր տուած բոլոր լուրերու ստուգութեանց մասին ամենայն կերպով կերպախառնումք և պատասխանատու եմք, քանի որ մեզ հետ ունեմք մի բազմաշարքար և ճշեալ ամբողջ այդ, կերպախառնումք, քանի որ տեղեղս, Սմերիկական հիւպատոս Սըր Ճէյմս, որ նոյնպէս Անգլիական փոխ-հիւպատոսութիւն ևս կը վայելէ, ցարդ մեր տուած լուրերն նա ալ ստուգելով մի առ մի արձանագրած է ի տեղեկագրել Անգլիական և Սմերիկական տէրութեանց։

Ահա դարձեալ կուգամ հետեւեալ դէպքն հաղորդել խմբագրութեանդ ճաշակ մը տալով թրքական բանականութեանց։

Բնիկ սեբաստացի Բօշեան Համբարձում անուն անձը, որ առեւտրի համար գիւղերը ելած էր, ճանապարհին երեք հիծեալ ոստիկաններ հանդիպելով, նորա ղենքերը կը պահանջեն, ըսելով թէ հայուն չըվայելիր զենք կրել։ Թէև Համբարձում ղենքի համար ունեցած թէ զքերէն ցոյց կուտայ, սակայն ոստիկանք առանց լսելու նորա առարկութիւններն, ղենքերը կանոն, ապա վրան խուզարկելով քսակին մէջ ունեցած 35 մէճիտն ու մէկ օսմանեան ոսկին ևս կը յափշտակեն։ Իրք Համբարձում կընդդիմանայ նոյն գումարը յանձնելու, ոստիկանք զայրացած՝ կրակ կընեն և զՀամբարձում սրունքէն ծանրապէս կը վիրաւորեն հրազինու գնտակաւ։ Անցորդ գիւղացիներ երկօր առաջ քաղաք բերին զայն, որն (Համբարձում) այսօր ոստիկանապետութեան դիմեց իր բողոք ուրացած իրենց արարքը, առարկելով թէ՛ զրպարտութիւն է միայն այդ «կեալութիւն» ի իրենց գէտ ըրածը։ Ուստի ոստիկանապետ խիստեմպէյ զՀամբարձում բանտարկել տուաւ, որպէս տէրութեան պարծում քանտարկել տուաւ, որպէս տէրութեան պարծումէնց գէտ զրպարտիչ մէկը։ Այլ ևս ինչ հարկ բողոք բանալ թիւրք ժողովրդեան արարքներուն գէտ, քանի որ նոյն ինքն կառավարութեան պաշտօնեայք կուսակալէն ցնեոյն զապղիէն կը մրցին միմեանց հետ

գհայս կողոպտելու։ Անցեմք օր նոյնպէս խոյս մը գիւղացիներ իրենց ցորենն ու փայտ ծախելով քաղաքէս դիւղ կը վերադառնային, բէժիին մարդիկն ճանապարհին վրանից ծխախոտ որոնելու պատրուակաւ կը խուզարկեն և անոնց քսակներու մէջ եղած ստակներն կը կողոպտեն։ Գիւղացիք թէև բողոքեցին, բէժի տնօրէն ու Նաշիտի, սակայն անյսելի մնացած է։

Կուսակալ Մէնտուէ պէյ մեծ փութով կախատի հայ ակամաւորներուն ստորագրել տայ այն երկրորդ հանրագրին, որուն մասին արդէն գրեցինք։ Հարկ չկայ ըսել թէ Մէնտուէ պէյ յաջողելու համար ձեռքէ չըձգիր խոստումներ օսկեղոյն, ճնշումներ և սպառնալիք։

Գիտէսիրտեան Ականջ։

ԽՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏԵ

Խմբագրութիւնս շատ տեղերից է ստանում նամակներ, որով յայտնում են թէ՛ մեզ ուղարկված է դրամներ զանապառանձերի միջոցով, մինչդեռ այդ դրամները մեր ձեռքը չէ հասած և այն էլ այնպիսի մի ժամանակ, երբ «զորքը» խիստ կարիք ունի դրամի։ Ուստի սրանով յայտնում ենք որ մեզ դրամ ուղարկողները կամ ուղարկեն ուղղակի խմբագրութեանս հասցեով կամ այնպիսի անձի միջոցով, որը վայելում է կատարելով վստահութիւն։ Մեր հասցեով ուղարկված գումարները եթէ չէ յայտարարված «Հնչակի» էջերում, կը նշանակէ չէ ստացված։

Խմբագրութեանս հասցեով Ռուսաստանից ուղարկված է ապահովացրած նամակ Բայց փոխանակ Beniard ի գրված է Renard, ուստի և փոստային վարչութիւնը մեզ չէ յանձնում այդ նամակը։ Խնդրում ենք յայտարարել այդ տեղական փոստային վարչութեան։

Իբրեւ պաշտօնական օրգան Հնչակեան Կուսակցութեան՝ յատուկ դատուէրի համեմատ՝ յայտնում ենք, որ Կուսակցութեանս Գանձարանում ստացվեցան. Ս. քաղաքից Վազենակէ 5 օսմանեան լիրա. — Հայկից 40 Փրանկ, № 41 ից 1 ու կէս օսմանեան լիրա. — Բուլղարիա Եւմ. քաղաքից Պ. Զալամից 10 Փր. Սէրդ ... 2 Փրանկ։

Շնորհակալութեամբ ստացանք իբրեւ նպաստ «Հնչակի» հետեւեալ գումարները. Աշ — ից Երիտասարդ հայ մշակ. ներ 3 բուր. Պ. ից Գ. Կ. ից 4 Փր. 46 ս. Աշ — ից Սահ. Ն. . . խան 5 Փր. գաղղական մարկաներ։

Յօդուածներ, Թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ուղարկել հետեւեալ հասցեով.

Montpellier (France). — M. Beniard. Poste Restante. (25).

Ընդօժ. — Հայկական ազատ տպարան.